Յովհաննու Կարապետի, ծախուք Մոլլասուլէմանցի Յովհաննէսեան տեառն Յակոբայ քահանայի և աշխատութեամբ բարեպաշտ ժողովրդեան 1886»։

Այս տեղ կը ներկայացնեմ Ռէս Աւոյի օդան, ժողովրդեան հաւատքը Խաստուրայ վանքի վերան և գիւղական բարբառով մի հին անց.ք։

Ալաշկերտի բարեխառն ամրան յաջորդած էր ցրտաշունչ ձմեռ, գիւղացիք վերջացուցած իւրեանց դաշտային գործեր և ձմեռուան պատրաստութիւն, փակուած էին իւրեանց տներու մէջ, իւրեանց զբաղումը միայն մնացած էր անասնոց խնամ տանել և ժողովրդական օդաներու մէջ հաւաքուիլ ժղլել, (զբաղուիլ), հէքեաթ ասել։

Օդաներն ընդհանրապէս շինուած են ախոռներու մէջ. ռէս Աւոն որ Խաստուր գիւղի երևելիներէն էր, ունէր մի օդա, ուր կը հաւաքուէին գիւղի հասարակութիւնը, կը նստէին խոտից հիւսուած կոշտ խսիրներու վերայ. սենեկի ներքին կողմն դրուած էր ջրի քուլաքն ու շարպիքն (ջրի բաժակ թիթեղէ շինուած) և որոց վերան բարձր, սեան կողին հաստատուած էր ձիթէ ճրագն, որ վառելու միջոցին թանձր ծուխ մի կարձակէր, փակ սենեակը կը լեցնէր. սենեկի վերին կողմն որմի մէջ շինած էր բուխերիկն, ուր կուտուած ցանի կտորներ կը վառէր։ Սենեկի երկու կողմն փըռուած էր, մէջ տեղն բաց էր բուխերիկը գնալ գալու համար. մէկ կողմի բարձր տեղը նստած էր գիւղի քահանայն եթէ թուրք կամ քուրդ նոյն տեղը բռնած չլինէին։

Մի ծերունի Յովհաննէս որ իւր զրոյցներով և